ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

<<ՍՄ-ՄՀ-ԳՀԱՇՁԲ-17/02>> ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովի նիստի

Ք. Մեղրի 21 հուլիսի 2017թ.
Ժամը 12:00

Մասնակցում էին
Հանձնաժողովի նախագահ՝ Միհեր Ղազարյան
Անդամներ՝ Մարտիկ Պողոսյան, Գուրգեն Գրիգորյան
Քարտուղար՝ Արթուր Հայրապետյան

<<ՍՄ-ՄՀ-ԳՀԱՇՁԲ-17/02>> ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հայտերի բացման մասին

1. Ընդունել ի գիտություն, որ.

1.1 <<ՍՄ-ՄՀ-ԳՀԱՇՁԲ-17/02>> ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով նախատեսված կարգով և սահմանված ժամկետում www.armeps.am էլեկտրոնային կայքի միջոցով հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

ՀՀ	Մասնակցի անվանումը/անունը/	Էլ. հասցեն
1	ՈՍԿԵՀԱՏՇԻՆ ՍՊԸ	ՀՀ, Արմավիրի մարզ, ք. Վաղարշապատ, Վազգեն Առաջին փ. 47/19
2	ԱԳԱՐԱԿՇԻՆ ՍՊԸ	ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Ագարակ, Չարենցի 26/39

2. Տեղեկություններ՝ հայտեր պարունակող ծրարների կազմման և ներկայացման՝ հրավերի պահանջներին համապատասխանության վերաբերյալ

2.1 Մասնակիցների կողմից ներկայացված ծրարները կազմվել և ներկայացվել են հրավերի պահանջներին համապատասխան

3. Տեղեկություններ՝ բացված յուրաքանչյուր ծրարում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության վերաբերյալ.

3.1 Մասնակիցների կողմից ներկայացված յուրաքանչյուր ծրարում առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը:

4. Տվյալներ՝ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.

4.1 Գնահատող անդամները գնահատել են, որ <<ՍՄ-ՄՀ-ԳՀԱՇՁԲ-17/02>> ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված նվազագույն պահանջներին մասնակիցների կողմից ներկայացված հայտերը համապատասխանում են հետևյալ կերպ.

ՀՀ	Հրավերով սահմանված նվազագույն պահանջները	Մասնակցի անվանումը, գնահատումը		
		Պիտանելիության չափորոշիչ	Տեխնիկական չափորոշիչ	Ֆինանսական չափորոշիչ
1	ՈՍԿԵՀԱՏՇԻՆ ՍՊԸ	Չի համապատասխանում	Համապատասխանում է	Համապատասխանում է
2	ԱԳԱՐԱԿՇԻՆ ՍՊԸ	Համապատասխանում է	Համապատասխանում է	Համապատասխանում է

4.2 <<ՈՍԿԵՀԱՏՇԻՆ>> ՍՊԸ-ի հայտով ներկայացրած փաստաթղթերը չեն համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին, մասնավորապես ըստ ՀՀ կառավարության 2017թ. Մայիսի 4-ի N 526-Ն որոշման Հավելված N1-ով հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 32-րդ մասի 12)-րդ կետի՝ տեղեկությունների (փաստաթղթերի) էլեկտրոնային եղանակով փոխանակման դեպքում դրանք ուղարկողը տեղեկությունները (փաստաթղթերը) հաստատում է էլեկտրոնային թվային ստորագրությամբ, որի արտատպումը պետք է տեսանելի լինի փաստաթղթի վրա: <<ՈՍԿԵՀԱՏՇԻՆ>> ՍՊԸ-ի հայտով ներկայացրած փաստաթղթերը, այդ թվում գնային առաջարկը, հայտի ապահովումը և կից վճարման պահանջագիրը հաստատված չեն սահմանված կարգով էլեկտրոնային թվային ստորագրությամբ: Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով՝ գնահատող հանձնաժողովը որոշեց <<ՈՍԿԵՀԱՏՇԻՆ>> ՍՊԸ-ի հայտը գնահատել անբավարար և մերժել:

5. <<ՍՄ-ՄՀ-ԳՀԱՇՁԲ-17/02>> ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հայտեր ներկայացրած մասնակիցներից բավարար գնահատված մասնակցի գնային առաջարկը հետևյալն է.

ՉՀ	Գնման առարկայի անվանումը	<<ԱԳԱՐԱԿՇԻՆ>> ՍՊԸ		
		Գինը առանց ԱԱՀ /դրամ/	ԱԱՀ /դրամ/	Գինը ԱԱՀ-ով /դրամ/
1	ՀՀ Սյունիքի մարզի Մեղրիի համայնքապետարանի վարչական շենքի չորրորդ հարկի վերանորոգում	53900000 Հիսուներեք միլիոն ինը հարյուր հազար	-	53900000 Հիսուներեք միլիոն ինը հարյուր հազար

5.1 Ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցնող մասնակից է ճանաչվել <<ԱԳԱՐԱԿՇԻՆ>> ՍՊԸ-ն, որպես բավարար գնահատված նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից:

6. 24.07.2017թ. ծանուցել 1-ին տեղ զբաղեցրած մասնակցին հրավերով սահմանված ժամկետում (երեք աշխատանքային օր) ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերը: Հրավերով սահմանված ժամկետում փաստաթղթերը չներկայացվելու դեպքում հանձնաժողովի կողմից կմերժվի 1-ին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը:

7. Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ. Մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետը՝ գնման ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի <<Ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշին վերաբերող հրավերով նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ 24.07.2017թ. հարցում ներկայացնել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

8. Հայտերի վերաբերյալ հարցումներ և պատասխաններ չեն եղել:

9. Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կողմից ուղարկված եզրակացության և 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված որակավորման փաստաթղթերը ներկայացնելու օրվան հաջորդող աշխատանքային օրը, Ժամը 12:00-ին Սյունիքի մարզ, ք. Ագարակ, Գ. Նժդեհի 5 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ-3, դեմ-0

Գնահատող անդամներ՝ Միհեր Ղազարյան

Մարտիկ Պողոսյան

Գուրգեն Գրիգորյան

Քարտուղար՝ Արթուր Հայրապետյան